ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

"13" նոյեմբերի 2012թ

№159 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով և «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի մարտի 7-ի «Հայաստանի Հանրապետության աղետների ռիսկերի նվազեցման ազգային ռազմավարությունը և աղետների ռիսկերի նվազեցման ազգային ռազմավարության իրականացման գործողությունների ծրագրին հավանություն տալու մասին» N281-Ն որոշման դրույթների և Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի 2011 թվականի սեպտեմբերի 30-ի N100-Ա հրամանի, **որոշում եմ՝**

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում աղետների ռիսկի նվազեցման ուղղությամբ աշխատանքները համակարգող հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն N1 հավելվածի:

2) Սյունիքի մարզի աղետների ռիսկի նվազեցման ուղղությամբ աշխատանքները համակարգող հանձնաժողովի աշխատակարգը՝ համաձայն N2 հավելվածի:

2. Հանձնաժողովին՝

1) աշխատանքներ տանել մարզային և համայնքային խնդիրները աղետների ռիսկի նվազեցման ազգային ռազմավարական ծրագրերում ներառելու ուղղությամբ և հետամուտ լինելու դրանց լուծմանը,

2) համապատասխան միջոցներ ձեռնարկել և օժանդակել մարզի համայնքներում աղետների ռիսկի նվազեցմանն ուղղված գործառույթների իրականացմանը:

3.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝

1) առաջարկություններ ներկայացնել հանձնաժողովում ընդգրկված մարզպետարանի աշխատակազմի քաղաքացիական ծառայողների պաշտոնների անձնագրերում համապատասխան լրացումներ կատարելու վերաբերյալ,

2) ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2012թ. նոյեմբերի 13
ք. Կապան

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի
2012 թվականի նոյեմբերի 13-ի N159 - Ա որոշման

ԿԱԶՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1. Ա. Հարությունյան - ՀՀ Սյունիքի ՀՀ ԱԻՆ ՓԾ Սյունիքի մարզային փրկարարական վարչության պետ (հանձնաժողովի նախագահ)

2. Ս. Ավետիսյան - ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ

3. Ա. Ոատաբաշյան - ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ

4. Ս. Թանգյան - ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ

5. Թ. Ղազարյան - ՀՀ Սյունիքի մարզպետարանի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ

6. Ա. Ծատրյան - ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ

7. Լ. Մարգարյան - ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ

8. Ա. Քարամյան - ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար Ռ. Ղազարյան

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի
2012 թվականի նոյեմբերի 13 -ի N 159-Ա որոշման

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԿԱՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Ընդհանուր դրույթներ

1. Աղետների ռիսկերի նվազեցման հանձնաժողովը(այսուհետև հանձնաժողով) հանդիսանում է ՀՀ Սյունիքի մարզում աղետների ռիսկերի նվազեցման (այսուհետ՝ ԱՌՆ) ազգային ռազմավարության իրականացման ոլորտում համակարգող մարմին:
2. ԱՌՆ հանձնաժողովին հաշվետու են մարզի համայնքային հանձնաժողովները:
3. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ, սույն աշխատակարգով և այլ իրավական ակտերով:
4. Հանձնաժողովին կից՝ հանձնաժողովի անդամների կողմից լիազորված ներկայացուցիչների ընդգրկմամբ կարող են ստեղծվել աշխատանքային խմբեր: Անհրաժեշտության դեպքում հանձնաժողովի աշխատանքներին կարող են ներգրավվել հանրապետական գործադիր մարմինների համապատասխան տարածքային ծառայությունների մասնագետներ և փորձագետներ:

II Հիմնական խնդիրները

5. Հանձնաժողովի խնդիրներն են՝
1) աջակցել աղետակայուն մարզ ձևավորելու գործընթացին՝ նպաստելով մարզի բնակչության մեջ աղետներին դիմակայման և անվտանգության մշակույթի ձևավորմանը,
2) առաջնորդել մարզում ԱՌՆ գործընթացները,
3) ներկայացնել առաջարկություններ ԱՌՆ խնդիրների լուծման վերաբերյալ,
4) կազմել և հաստատել ԱՌՆ ուղղված գործողությունները և զարգացման պլանները,
5) հստակեցնել և կանոնակարգել մարզում աղետների ռիսկի նվազեցմանն ուղղված գործողություններում ընդգրկված կազմակերպությունների գործառույթները, դերերը, իրավասություններն ու պատասխանատվությունները:
6) համակարգել ԱՌՆ համայնքային թիմերի գործունեությունը,
7) ապահովել աղետների ռիսկի նվազեցման դրույթների ներառումը և կիրառումը մարզի զարգացման ծրագրերում,
8) նպատել մարզի կրթական և առողջապահական հիմնարկ ձեռնարկությունների աղետների պատրաստվածության և ռիսկերի նվազեցման մակարդակի բարձրացմանը և զարգացմանը,
9) աջակցել համայնքներին՝ ԱՌՆ հիմնախնդիրները ներառելու համայնքային զարգացման քառամյա պլաններում,
10) նպաստել մարզի բնակչության մոտ աղետներից անվտանգության կուլտուրայի ձևավորմանը:
11) զարգացնել մարզում մոնիթորինգի, կանխատեսման և վաղ նախազգուշացման համակարգերը,

12) մշակել և իրականացնել շարունակական ծրագրեր՝ ուղղված աղետների ռիսկի նվազեցման ոլորտին առնչվող կարողությունների զարգացմանը մարզի համայնքներում,
13) պարբերաբար տեղեկատվության տրամադրել ԱՌՆԱՊ հիմնադրամին

III Հանձնաժողովի աշխատանքների կազմակերպում

6. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով:
7. Հանձնաժողովի նիստերը հիմնահարցերի վերաբերյալ անցկացվում են կիսամյակը մեկ, իսկ ընթացիկ հարցերի վերաբերյալ՝ ըստ դրանց առաջացման անհրաժեշտության:
8. Հանձնաժողովի նիստերն իրավազոր են հանձնաժողովի անդամների առնվազն կեսից ավելի մասնակցության դեպքում:
9. Հանձնաժողովի աշխատանքները կազմակերպում և նիստերը վարում է հանձնաժողովի ղեկավարը:
10. Հանձնաժողովը իր նիստերի ընթացքում ընդունում է որոշումներ:
11. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են քվեարկությանը մասնակցած անդամների կեսից ավելի կողմ ձայնով:
12. Հանձնաժողովի որոշման վերաբերյալ հանձնաժողովի անդամը կարող է ունենալ հատուկ կարծիք, որը կցվում է նիստի արձանագրությանը:
13. Հանձնաժողովն ունի քարտուղար, որը արձանագրում է հանձնաժողովի նիստերը և նախապատրաստում հանձնաժողովի աշխատանքները կազմակերպելու համար անհրաժեշտ փաստաթղթերը:

IV Հանձնաժողովի ղեկավարը

14. Հանձնաժողով ի ղեկավարը՝

1) հրավիրում և վարում է հանձնաժողովի նիստը: Իր բացակայության դեպքում հանձնաժողովի ղեկավարի լիազորությունները իրականացնում է հանձնաժողովի ղեկավարի տեղակալը,

2) ապահովում է հանձնաժողովի բնականոն գործունեությունը,

3) հանձնաժողովին է ներկայացնում նիստերի օրակարգերի նախագծերը,

4) համակարգում է հանձնաժողովի աշխատանքը:

V Հանձնաժողովի անդամները

15. Հանձնաժողովի անդամները՝

1) իրավունք ունեն՝

ա. հանձնաժողովի քննարկմանն ներկայացնելու հարցեր,

բ. ներկայացնելու հանձնաժողովի գործունեության, ինչպես նաև նիստի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ առաջարկություններ,

գ. ծանոթանալու նիստերի արձանագրություններին,

2) պարտավոր են՝

ա. մասնակցել հանձնաժողովի աշխատանքներին,

բ. կատարել հանձնաժողովի որոշումները, ղեկավարի հանձնարարականները:

VI Հանձնաժողովի քարտուղարը

16. Հանձնաժողովի քարտուղարը՝

1) ապահովում է հանձնաժողովի քննարկմանը ներկայացվող փաստաթղթերի և նյութերի պատրաստումը,

2) կազմակերպում է հանձնաժողովի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում միջոցառումների իրականացումը, հանձնաժողովի նիստերի գումարման նախապատրաստման աշխատանքները,

3) ապահովում է նիստերի արձանագրության կազմումը,

4) ապահովում է հանձնաժողովի գործունեության մասին տեղեկատվության տարածումը,

5) սահմանում է հսկողություն հանձնաժողովի որոշումների իրականացման աշխատանքների մասին,

6)հանձնաժողովի ղեկավարին է ներկայացնում հաշվետվություն իրականացված աշխատանքների մասին.

7) կազմակերպում է ԱՌՆ համայնքային հանձնաժողովներից ստացվող նյութերի հավաքում, մշակում և ներկայացնում հանձնաժողովի քննարկմանը,

8) առաջարկություններ է ներկայացնում, ըստ ուղղությունների, աշխատանքային խմբերի ստեղծման վերաբերյալ ԱՌՆ ոլորտում ի հայտ եկած հրատապ խնդիրների լուծման, ինչպես նաև հիմնական խնդիրների իրականացման համար: Աշխատանքային խմբերի կազմը հաստատում է հանձնաժողովի նիստը կամ հանձնաժողովի ղեկավարը՝ նիստերի միջև ընկած ժամանակահատվածում,

9)հանձնաժողովի ղեկավարի հանձնարարությամբ իրականացնում է այլ լիազորություններ:

VII Հանձնաժողովի գործունեության դադարումը

17. Հանձնաժողովի գործունեությունը դադարում է ՀՀ Սյունիքի մարզպետի որոշմամբ:

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար Ռ. Ղազարյան